

ԱՄԱՆԻՈՒ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆԻ ԴԵՐՔԻ 39

27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վարդայ խաչք. Մ. ՆԱԹԱՆԵԱՆ. — Գրական Նօթեր. «Հենրիք Սենիքիվիճ». ՍԹԱՆԻՍ-
ԼԱՍ ՌԶԿՎԻՍԳԻ. Թարգմ. ՉԻՖԹԵ-ՍԱՐԱՅ. — Երգը ցաւին (Բանաստեղծութիւն) Մ. Ա.
ՄԵԱՆ. — Գիտութեան եկամեններն «Պատմագրութեան». — ԲՐԻՋԱՆԹԵՄ. — Վոստորեան Նամականի.
ՄԵՆԱՍԵՐ. — Յիշատակ (Սիրերգ) Մ. Կ. Մ. — Լիլիին Մօրրիս (Վեպ) ՀԵՆՐԻԻ ՍԵՆԳԻԼԵ-
ՎԻՋ. — Խմբագրական Նօթեր.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դրո.
Եւ Եւրոպայի համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արձաատնման 12 Ժրանք կամ
5 Ժրանք: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
թեան չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտուն: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առա-
կուքիւնները նկատուողութեան չեն առնուիր:
Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասջելի պայ-
մաններով:

Ձեռն-Բէ կը ծախուի ՀԱՏԻ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ՝

در علیہ غلطہ دہ (ماسیس) غرضتہ سی ادارہ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԲՈՒՆՈՐ ԵՐԱՆՈՅԻ ԲԿՈՍՑ ԿԸ ՀԱՆՆԵՆ

Ասիկայ որոշեալ ժամանակի մը մէջ տեղի կունենայ, սակայն անոնցմէ շատերը՝ սաստիկ ցաւօք և անհանգստութեամբ կը հանեն: Ուստի պէտք է տրուիլ մանուկներուն,



SCOTT'S EMULSION

որնոր ակաւայ հասած ատենին՝ բոլոր ցաւերէ և աղետներէ զանոնք կը փրկէ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

տղայական վեշտերու համար՝ շատ կարևոր տղայական դեղ մըն է: անոնց կատարեալ առողջութիւն կուտայ և զանօնք նոյն վիճակի մէջ կը պահէ: Թող Ձեր զաւակները առողջ և զօրաւոր մեծնան շնորհիւ

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ:

Հեշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

24

Բոլոր բեղաբերները և բեղաբերները և ծախել:

“AU TALON D'OR” ՕԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ
ԳԱՌԼՕ ԱՅՆԱՍԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ հափու վրայ չի նուիրք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գինեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒՆԱՆ և Ե. ԲԱՍ. ԳՈՒԼԵԱՆԻ Ձինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բարձր, հոսաւե՛ս եւ արողջաբար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ա՛մառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, Ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կա՛մուրջին գլուխը լրագրաւաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդրօյին ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պոն Մարչէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէնի, Օթէլ աը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպորտները, Հալը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, ֆրանսական Թրանսպորտներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր կազմական կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սինեակին եւայլն:

Ընկերութեան գրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԴԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կառնուելիութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հապտ. — Պոլիս, Մահալա փաշա, Պէոյիւք Եըլտըզ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անփխի վաճառատուն մը, Պոլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առուած յաւանաբարութիւններ կ'ընդունուին:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈՍՒԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՆՔ



1881 մարտ 20ի Կայս: Ուժադով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈՍՒԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՆՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵԿԱՌՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՆՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՒՐՈՆԵԼՈՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Քրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	137,300,000	*

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամագլուխ եւ վեասուց հատուցում	282,000,000	»
--	-------------	---

1902 տարւոյ մէջ գպնձուած ապահովագիրն եւ տոկոս	54,000,000	»
---	------------	---

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօմրուք խան, Բարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՁԱԿ

Վարժարանիս նպատակն է տալ միջնակարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւելով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագրին: Նոյն ատեն ալ, սակայն, նկատի առնելով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզուներու եւ դրականութեան, ինչպէս նաեւ ֆրանսերէնի: Ամենէն պզտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշակերտները կանուխէն ընտելանան Անգլիերէնի: Տնօրէնը Տօքթ. Չէյմպրս կ'աւանդէ տոմարակալութեան դասը, որ մասնաւորապէս կը յարմարցնէ ընթացաւարտները գործնական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգամայն մօտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Դիտական ճիւղերու դասախօսութիւններն արդիւնաւորելու համար՝ վարժարանը ունի պիտանի ու ահրաժեշտ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը: Նորակառօյց նպատակայարմար շէնքը եւ նորաստաց ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակէ աւելի նպաստաւոր են աշակերտներու հան-

դըստութեան եւ առողջութեան, գեղը ըլլալով արդէն հանրածանօթ՝ իր մաքուր օդովն ու գեղեցիկ տեսարաններովն:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տարեշրջան) տեղի պիտի ունենայ Ապտեմբեր երեքին (Ն. Տ.): Տարեթոշակն է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ՝ Պայպըլ-Հաուզ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պարտիզակ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵՐ. ԳՐԱՏԱՆ

Ձախմակերկրոր թիւ 64

ԸՆԹԱՅՔ ԸՆԹԵՐՑ. — ԴՊՐՈՑԻ ԳԻՐԲԸ: Հրատարակուեցաւ Տարր. Ընթ. Բ. տարին, ճոխ պատկերներով ու բազմադան նիւթերով՝ հեղ. Չ. էֆ. Թրոսեանի գին 4 դր.: Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ Եւ ճրի կը ստանան, 50 փարայ բօսթի ծախք ղրկելով: Ուղղակի Գրատան ղրկողներուն կաբելոք գելչ մը տրուի:

Վ. Յ. Յակոբեան Անգղ-Հայ Բառգիրքը որ սպառելու վրայ է միմիայն յիշեալ գրասուներ կը գտնուի, ուր դիմելու են պէտք ունեցողները:

Ամեն վճարում կանխիկ է:

ԱՄԱՆԻՍ

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 39

27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903

ՎԱՐԱԳԱՅ ԽԱՉՐ

Վաղը, կիրակի, Վարազայ Սաչի տօնն է, զոր կը կատարեն շքեղ հանդիսութեամբ բովանդակ հայ եկեղեցիները: Աւելորդ չըլլայ ուրեմն հարցնել թէ ո՞ր է Վարազայ Սաչը, կամ թէ ինչո՞ւ այդ անունն առած է, անուն մը՝ որ բնական է թէ ծանօթ լեռնէն իրեն անցած է:

Ահա թէ ի՞նչ նուիրական աւանդութիւն կայ այդ մասին մեր եկեղեցական տարեգրութեանց մէջ:

Քրիստոսի խաչափայտը Կոստանդիանոս կայսեր մօր Հեղինէ դշտոյին ձեռքով Դ. դարուն սկիզբը գտնուելէն ի վեր, մեծ յարգանաց եւ երկրպագութեան առարկայ դարձաւ բոլոր քրիստոնէից մէջ: Բայց այդ դրանուած խաչափայտէն առնուած ինչ ինչ կը տորները, կ'ըսէ աւանդութիւնը, Առաքելոց ժամանակէն իսկ իրեւ մասունք կը յարգուէին հաւատացելոց մէջ: Այդ մասունքնեքէն կտոր մը Դիոկղետիանոս կայսեր ժամանակ ապրող հօգակաւոր Կոյս Ս. Հովսիսի մէջ ձեռք կը դանուէր որ 40 ի չափ ընկերներով Վան դաւառի Վարազ լեռը կ'ապաստանի: Յետոյ պէտք տեսնելով աւելի հեռուները երթալ եւ չուզելով միշտ իրեն հետ պտտցունել խաչափայտին մասունքը, ապահովութեան համար կը զետեղէ նոյն լեռան անմատչելի մէկ փապարին մէջ եւ այնպէս կը մեկնի:

Սմբողջ երեք դար այդպէս ծածկուած կը մնայ Ս. խաչը Վարազայ լեռան մէջ: Եօթներորդ դարուն, մինչ Ներսէս Դ. Շինողէն Հայոց Կաթողիկոս (639—661), Թողմիկ անուն ճշնաւորին լուսաւոր ճաճանչներով կը յայտնուի: Հրաշալի եղելութիւնը մեծ արձա-

գանդ կուտայ ոչ միայն Վան գաւառին՝ այլ եւ բովանդակ Հայոց մէջ: Կրօնասէր հոգիները ջերմեռանդութեամբ կը լեցունին, ամէն կողմէ՝ երկրպագութեան կը դիմեն յայտնեալ Ս. խաչին: Անմիջապէս հոյակապ վանք ու եկեղեցի կը շինուին անոր գտնուած տեղը, կրօնաւորներ կը լեցունին ամէն կողմէ, հետզհետէ կ'ընդարձակեն շէնքերը եւ կրօնական ուխտ ու միաբանութիւն մը կը հաստատեն: Այսպէս կը դրուի ահա Վարազայ վանքին հիմը. Ս. խաչն ալ անոր անունով կը յորջորջուի, յատուկ շարական մը կը յորինուի եւ Հայրապետական հրամանով կ'որոշուի այսնել Վարազայ Սաչը հայ եկեղեցիներու մէջ ամէն տարի սեպտեմբերի վերջին կիրակին, այսինքն խաչվերացէն երկու շաբաթ ետքը: Այնչափ մեծ եղելութիւն մը կը համարուի Ս. խաչին հրաշափառ յայտնութիւնը որ մինչեւ անգամ շաբաթական պահք մըն ալ կը սահմանուի որ կը կոչուի «Պահք Վարազայ Ս. խաչին»:

Անկեղծապէս ջերմեռանդ եւ համոզմամբ հաւատացեալ Քրիստոնէի մը համար իրօք շատ մեծ դէպք է Քրիստոսի խաչափայտէն մէկ մասին յայտնութիւնը: Ասոր համար, մեր նախնիք՝ որ հաւատքի օծումը եւ դրոշմն ունէին մինչեւ իրենց էութեան խորը, կարելի եղած ամէն յարգ ու պատիւ ընծայած են անոր, եւ բաց ի տարեկան հանդէսներէն ու փառաբանութիւններէն՝ յատուկ ուխտադնացութեամբ ալ կ'որհնաբանէին զայն, — ուխտագնացութիւն որ 13 դարէ ի վեր կը շարունակուի տակաւին դէպ ի Վարազ, հոգեւորորդ զգացմամբ:

Բայց Ս. խաչը Վարազայ լեռան վրայ իր

գտնուած տեղը չէ որ կը հանգչի ակօմ: Նախ փոխադրուեցաւ մէկ ժամու ճամբայ դէպի արեւմուտք, լերան բարձրաբերձ սարաւանդէն քիչ մը վար, հոն ուր շինուեցաւ ներքին Վարազ, մինչ առջի տեղը կը կոչուէր վերին Վարազ, որուն հետքերը կան տակաւին. իսկ ներքին Վարազն է այժմու Վարազը, որ երբեմն ժառանգաւորաց վարժարան ունեցաւ. և իբրեւ Դպրեվանք ծառայեց չրջակայ գաւառներուն, արդի Ս. Հայրապետին վարդապետական շրջանին մէջ:

Սակայն Ս. Խաչը հիմա ներքին Վարազն ալ չէ. իբր երկու դար է որ կը գտնուի Վանայ քաղաքամիջի Առաջնորդանիստ Ս. Նշան եկեղեցին և շաբաթը մէկ անգամ յատուկ պատարագ կը մատուցուի այդ եկեղեցին ուր ուխտաւորներու մեծ բազմութիւն մը ներկայ կ'ըլլայ միշտ: Այս մատենքը Ս. Նշան եկեղեցին մէջ ի տես դրուած չէ, որ կարելի ըլլայ տեսնել. այլ մասնաւոր գանձարանի մէջ կը պահուի անձեռնմխելի: Ուխտաւորները անոր արտաքին պատը միայն կը համբուրեն և բերաւորներ են որ իրենց ջերմ հաւատքին շնորհիւ հրաշալի արդիւնքներ կը վայելեն:

Ահա այս է Վարազայ Ս. Խաչին համառօտ պատմութիւնը որ իբր նուիրական աւանդութիւն մը ծանօթ է մեր եկեղեցական — տոհմային եղելութիւններուն գիտակամէն անձերու, որոնց թիւը դժբաղդաբար երթալով կը պակսի, զի շատեր այլ եւս չեն հետաքրքրուիր ու չեն զգածուիր այսպիսի նիւթերով՝ աւելի կարեւոր և զգայացունց համարելով սիրային գրուածքներ քան կրօնային ու հոգեւոր դէպքի մը պատմութիւնը:

Գալով Վարազ լերան, որչափ որ հիմա Ս. Խաչը չկրեր իր հողին վրայ, բայց կը շարունակէ իր անունը տալ անոր, որուն ընդունարան և պահարան եղած է աւելի քան հազար տարի: Իր նշանաւոր կաթողիկէն և բաղմամբիւ տաճարները բոլորն ալ այդ Ս. Խաչին համար կանգնուած են և ընդհանուր անունով Ս. Խաչ կամ Ս. Նշան կը կոչուին: Մերձաւորապէս 3500 մեթր բարձր այդ լերան վրայէն էր որ ճառագայթեց Ս. Խաչը:

Ս. ՆԱԹԱՆԵԱՆ

ԵՐԳԸ ՅԱՆԾՆ



Դիւեքն անցած է. նուրբ տգոյն շողեր կը սկսին ծիլ Գ. Դ. հորիզոնէն վեր. երկնից մեջ ամեն յուսաւոր հալի. Միայն Արուսեակ մարմրած փայլի. Շրջուկ մը չիկայ. մարդիկ ճակաւին Այս ժամուս անուշ քնոյ մեջ քայուին. Թուշուններն անգամ դեռ արթնցած չեն, իսկ ես կը հսկեմ, . . . ցաւեր զիս տանէն Պրկելով մարմնոյս ջիւերն անխնայ. . . Ո՛վ մարդկային խեղճ հողէ մեքենայ. Ցաւէն սասանած՝ հազիւ աջարբեր Նայուածով դիտեմ այն սիրուն ափեր Ու լնակի պէս այն պատառ մը ծով Ու մերկին մեղէն՝ կարծես դիպուածով Բուսնին ու պարզեմ պակերներ փոփոխ՝ Փայլով երանգով հետզհետէ նոխ. . . . Ցաւէն խորհակուած՝ վայրկեաններուն կաղ Ընթացքը որքան ինձ բուրի դանդաղ, Մինչ նոնանակին երբեւեկ քիֆ բաֆ եւս լուրքեան մեջ որո՞ւ՝ անսայթաֆ, Անդարձ ժամերուն փախուստն անդադար Յիւեցընէ ինձ զոգցես հեզմաբար. Բնութիւնը միտս կը գործէ անհոգ, Խրնամով մանածն՝ աւրէ անողոֆ. Աւեր է սիրս ալ՝ իդիւրէ քալուր. . . Ծովուն՝ անհաւին երգն ահագնալուր, Վարդեր մայիսի ու զարնան հովեր Ձեն խանդավառեր, ա՛լ զիս չեն բովեր. Ամեն ինչ մութ է՝ երբ ցաւեն կ'ընկնիմ. . . Ո՛վ մարդկային սիրս, յողոզող սւ ելնիմ:

19 Մայիս 1902

Ս. ԱՃԵՄԵԱՆ

Հաճոյքով կը ծանուցանենք թէ, Ծաղիկ շարաթաթերթը՝ որ անպայման կերպով դադարման դատապարտուած էր՝ այսօրոսն է կը վերսկսի հրատարակուիլ, արտօնութեամբ Տպագրական Տեսչութեան:

ԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՀԷՆՐԻԲ ՍԷՆԲԻԷՎԻՁ

ՔՈՆՕ ՎԼԱՏԻՍԻ մեծահոգի ու լազդաւոր հեղինակը Հէնրիք Սէնքիէվիձ, այսօր մօտաւորապէս յիսուն տարու է. միջահասակ, վալեղաձև ու աղնուաշուք, —չեմ կրնար հոս չի գործածել աս բառը՝ որ այնչափ հասարակցած է հիմա, և որ սակայն այնքան լաւ կը պատշաճի իրեն, —համակրելի ու հրապուրիչ այնչափ՝ որչափ կարելի է իր վարուելու կերպին ու քիչ մը ցուրտ աղնուամեծարութեանը մէջ, իր ֆիզիքականովը կատարելապէս կ'իրադրածէ բոլորական տիպարը, ինչպէս որ իր գրական հանձարը, եղական հաւատարմութիւնով ու լիակատարութիւնով մը իր ցեղին հոգին ու հանձարը կը ցոլացնէ:

Դէմքին գիծերը նուրբ են, բերանին ծալքը քիչ մը խիստ, ճակատը մեղամաղձութիւնով սքօղուած, յարափոփոխ ու ճոխ երանգներով լեցուն խորունկ նայուածքը օփտուած ծայրայեղ պայծառատեսութիւնով ու թափանցողութիւնով մը, որուն բարեացակամ հեղինակաւորութեան և պինդ կորովի արտայայտութիւնը անկարելի կ'ըլլայ քեզ մօտնալ, երբ անգամ մը միայն բաղդ ունենաս ներկայ ըլլալու մտերիմ այն խօսուրդաւորներէն մէկուն, ուր Սէնքիէվիձ արուեստի կամ միտքի վերաբերող խնդրի մը վրայ վիճարանած պահուն, կ'ողեւորի, կը մոռնայ իր սովորական վերապահութիւնը և մէջտեղ կ'ելլայ իր ճշմարիտ բնութիւնը, որ բնութիւնն է գեղեցկութեան ու տեսականի սիրահար ու խանդոտ մէկու մը՝ որ սակայն չ'ախորժի իր նախասիրութիւնները ցուցադրութեան դնել ռամիկին առջև և որ դժուարով դուրս կուգայ իր սիրելական ինքնամիտիութեան:

Սառչին անգամ, երբ Բօլանիէֆի Բնսանիին հեղինակը տեսնալու ըլլաք, աշխարհիկ, բարեկիրթ ու անթերի manièresներով և ամէն բանէ առաջ, ամբողջին մէջէն աննշար անց-

նելու ցանկացող մարդ մը պիտի երեւայ ան ձեզի, քան թէ գրական մարդ մը, մեծ արուեստագէտ մը: Իր արդուղարդին անպաճոյճ վայելութիւնը, իր ընդունելութեան աղնուակերպութիւնը, իր խօսակցութեան քիչ մը խրոխտ բարեշնորհութիւնը, իր անձին վրայ ամէն բան, 'նոյնիսկ՝ սովորաբար ծանր, լուրջ ու խոհուն իր դիմադժութեան ընդհանուր արտայայտութիւնը, զոր քիչ անգամ ժպիտի մը շնորհալիութիւնը կուգայ լուսավառել, վերջապէս ամէն բան, իր մէջ, կը յատկանշեն աղնուական ու ընկերական մարդը, անթերի դաստիարակութիւնով և բաւին բովանդակ առումով նեքսթօնը: Բոլանիական գրականութեան մէջ աննախընթաց ու անսահման իր յաջողութիւնը, փոխանակ իրեն թելադրելու աւելի աննկատ ու դուրամատոյց այն քաղաքավարութիւնը, ունայնասիրութիւնը ու թանձր զուարթամտութիւնը որոնք իր կարգ մը սլաւ արուեստակիցներուն յատկանշներն են, ա'լ աւելի չէշտած է, իր մէջ բնականօրէն գտնուած վերապահութիւնը, փափկանկատութիւնը, բընածին մեծանձնութիւնը և ռէքլամի համար ունեցած ար համարհանքը:

* *

Սէնքիէվիձ լիթուանական ծագում ունի. իր ընտանիքը վաղեմի ու պատուական՝ թայց ընչազուրկ աղնուականութեան մը ներկայացուցիչն է:

Ապագայ վիսյառնը իր ուսումը կտտարեւադործեց Քիէվի Համալսարանին մէջ և շատ օգտաւէտ կերպով, ինչու որ խիստ զարգացած, յոյժ մտայի և ծայրայեղօրէն հրմտալից է, բան մը որ գրեթէ հազուագիւտ է իր սլաւ արուեստակիցներուն մէջ: 1875ին վարչաւիա եկաւ, որ մինչև այսօր է և կը մնայ բոլորական գրական ու արուեստագիտական կեանքին իմացական կեդրոնը եւ իրեն կը քաշէ բոլոր նորընծայ գրամարդիկը, ինչպէս որ միևնոյն բանը կ'ընէ Բարիդ՝ Պըրանսոյի մէջ: Սէնքիէվիձ իր նախադրածները սկսաւ համեստօրէն, լրագրութեան մէջ՝ ուր իր առաջին յօդուածները ոչ նուազ անմիջականօրէն աչքի դարկին իրենց անձնական,

ինքնատիպ շեշտով ու ոճով որ հետզհետեւ թափ կ'առնէր: Եւ սակայն, դեռ ոչինչ դու- շակել կուտար ապագայ իր փառքը, ոչ ալ արտասովոր փթթումը այդ տաղանդին, որ տակաւին իր ուղեգիծին, իր կարողութիւն- ներուն ու իր ուժին գիտակցութիւնը չուներ: Իր մէջ ոչինչ կը մատնանշէր դեռ, ամբողջ գրականութեան մը ապագայ մեծ մարդը, և հեղինակը այն գլուխ-գործոցներուն՝ որոնք Բո- լանիէի րնցանքի և Քոլո Վասիս կը կոչուին: Նախափորձի տարիներու այս չըջանին, — որ ոակայն շատ կարճ եղաւ Սէնքիւէլիձի համար, — մէջ է որ իր առաջին մեծ ճամբորդութիւնը ըրաւ: Միայնալ-Նահանգները զնայ և հրա- տարակեց իր զրօսաշրջիկի տպաւորութիւն- ները՝ որոնք մեծ ազմուկ հանեցին և իրեն, առաջին անգամ ըլլալով, գրական յաջողու- թեան վայելքը պարգեւեցին: Այդ հատորը երկտասարդական պերճ խանդով մը, զուար- թախոհութիւնով ու շարժումով լեցուն, վառ- վըռուն գիրք մըն է: Բայց նորէն ընթացիկ լրագրողի իր շեշտն է որ կը տիրապետէ հոն՝ ուր կարելի չէ գուշակել զմայելի բոլորովն մը Սէնքիւէլիձի գրական կարողութիւննե- րուն որ վերջէն, ուղեւորական տպաւորու- թիւններու դժուարին ու մասնաւոր այդ սե- ուին մէջ, պիտի արտագրէր հիմնալի գործ մը, Ալփրիկեան Նամակները, զոր իր ամէնէն հզօր արտադրութիւններուն առաջին կարգը կը դասեմ ես:

Այն պահուն իսկ ուր այնքան կողմնակա- լութիւնով կը յարձակին կոր Ֆրանսայի գաղ- թային աշխարհալարութեան վրայ, հետա- քրքրական պիտի ըլլոր թարգմանել այն դե- ղեցիկ ու պերճախօս շխտողութիւնները՝ զորս Սէնքիւէլիձի մէջ կը բերէ, ալփրիկեան եղբերդական ու լայնածաւալ երկրին մէջ, ֆրանսական քաղաքակրթութեան առաջ բե- րած բարերար ազդեցութեան վրայ, այլ մա- նաւանդ Ջանդիպարի մէջ ֆրանսացի միսիո- նարներուն հիմնալի գործունէութեան վրայ, ուր բոլոնիացի գրագէտը անձամբ հաստատած է մարդասիրութեան, անձնութեան ու կանացի դժութեան այն հրաշալիքները՝ որոնք անոնց եռանդին արդիւնքներն են և զած:

Ինչ որ ալ ըլլայ, Ալփրիկեան Նամակները Սէնքիւէլիձի համբաւին սկզբնաւորութիւնը կը յատկանշեն, և իր գրագէտի ճակատա- գիրին վրայ ահազին ազդեցութիւն մը ու- նեցան: Անոնց մէջ է որ կը յայտնուի նմա- նապէս, իր անհատականութեան էն գլխաւոր գիծերէն և իր նկարագիրին էական ձգտում- ներէն մէկը. ճամբորդելու կրակոտ բաղձանք մը:

Ինք անոնցմէ է որոնք իմացական նե- րուժ հրճուանք մը կը գգան դիտելով ան- ծայրածիր տիեզերքին միանգամայն յարափո- վիտ ու միօրինակ տեսարանները, անհուն հեռապատկերները. անակնկալ դաշտանկար- ները, զանազան ու հեռաւոր հորիզոնները, շորս կը սիւռէ ան մեր աչքերուն՝ առջև. ա- նոնցմէ՝ որոնք գոյներու, եղանակներու, ա- նուշահոտութիւններու, և գեղեցկութեան այնքան այլազան տեսիլներու ցոլարձակ կրկներկերով մէջէն, բարձրու, սուրու- թիւններու և կրօնական կամ ընկերային հա- լատալիքներու ակնյայտ տարբերութիւննե- րուն տակ, կը սիրեն վնասել ու գտնալ այն էական քանի մը ձիւրքերը՝ որոնք մարդ- կութեան կեանքի սկզբունքը ու իսկութիւնը իսկ կը կազմեն:

Նժդեհութեան թուականներուն մեծ բա- նաստեղծներէն ի վեր ոչ մէկ բոլոնիացի գը- րագէտ ճամբորդած է Սէնքիւէլիձի չափ և թերեւս այդ համաշխարհիկ կեանքն է որ այնքան լայնցուցած է իր գաղափարները, ազ- նուայուցած տեսականացուցած է ծննդա- վայրի սիրոյ իր յղացումը, միւսեւոյն ատեն պարգեւելով իրեն խորունկ մարդկայնութիւն մը, որ կը բաւախէ Քոլո Վասիսի լաւագոյն էջերուն մէջ և մեր աչքերուն առջև կը բա- նայ իր բոլոնիական պատմական վէպերուն անծայրածիր հորիզոնները: Մինչև այսօր Սէն- քիւէլիձի կը շարունակէ անխոնջ ուղեւորի իր կեանքը. կը ճանչնայ բովանդակ եւրոպան, քայլ առ քայլ, Ամերիկաները, և Ալփրիկեան երկիրներուն մեծ մասը: Բան մը հոգը չընէր: Ամէն տարի, իր ծննդավայրին մէջ աւելի կամ պակաս երկար կայքէ մը ետքը, կրկին կը մեկնի դէպ ի հեռաւոր երկիրներ, նոր

սպաւորութիւններու նկարագեղ զգայութիւններու ու թերեւս առանձնութեան ու մեկուսացումի ալ ծարաւի, որոնք այնքան յարմար են խոկմունքի և դրական ստեղծագործութեան դժուարութեան վաստակին:

Բոլոնիացի անուանի գրագէտին կեանքը, այսպէս, երկու որոշ չրջաններու կը բաժնուի յստակօրէն. իր կայքերը Բոլոնիայի մէջ՝ շատ մօտեմէն են, որովհետեւ Սէնքիէվիձ միշտ սիրած է՝ ճշմարիտ ու բարձր ընկերութեան փայլը, հմայքը ու վայելչականութիւնը և միշտ յօժարակամ յաճախած է զայն աքսորի երկաւրասեւ ամիսներէն ետքը, — աքսոր կամաւոր, զոր կը փնտռէ, հեռու՝ փառքի մտադրաւունքներէն, հոգեբէն ու աղմուկէն, լուծութեան ու ինքնամիտփութիւնն քաղցրութեանը մէջ և անձանօթ լուսաւորներու տակ ճամբորդական դնացքի մը բարեբար տենդովը վարակուած:

* *

Սէնքիէվիձ, Ամբրիկայէն վերադառնալէն գրեթէ անմիջապէս ետքը կը հրատարակէր պզտիկ նորավէպ մը, *Scandales* Եանգիս վերնագիրով, որ մեծ աղմուկ հանեց: Գրական այդ պզտիկ գոհարը անդիմադրելի չնորոգով, յուզումով ու բանաստեղծականութիւնով լեցուն, բոլոնիացի հոյակապ վիպագիրին ասպարէզին մէջ կարեւոր թուական մը կը բանայ: Այդ դասական նորավէպը, որուն այնքան նմանողութիւնները երեւան եկան վերջէն, եղաւ իրեն համար ինչ որ Բուլգազուկը (*Boule de Suif*) եղած էր իմ անբաղդ ու դժայելի վարպետիս ու բարեկամիս, Կի տը Սօբասանին արուեստագիտական կեանքին մէջ. մէկ անգամէն ծանօթացուց հասարակութեան ստուար ու ամէն խաւերուն և մէկ օրէն միւսը մեծ համբաւի տէր ըլլաւ զայն:

Շատ չանցած, ուրիշ նորավէպեր, նոյնչափ գերընտիր զգացումով զեղուն, և անթերի եղանակով մը գրուած, երեւցան հրապարակի վրայ, միեւնոյն ասեւն նախանձոտներու, ի նաստակներու, անմիաներու մէջ, — որոնք կը վիստան ալէն երկիրներու գրական աշխարհին մէջ, — յարուցանելով սա նենգամիտ գաղտնիմացութիւնը (*insinuation*) թէ

Սէնքիէվիձ, միմիայն նորավէպի, ուրուանդկարի կամ ընդհանուր առումով, գրական արտայայտութեան երկրորդական ձեւերուն մէջ կրնայ յաջողիլ:

Նւ սակայն, ինծի կուղայ որ իր տեսակին մէջ կատարեալ նորավէպ մը, տաղտկալի ու վիժած վէպէ մը չա՛տ աւելի կ'արժէ: Բարեբաղդաբար, շատ չանցած հրապարակ կ'ըլլար Սէնքիէվիձի երկարաշունչ առաջին գործը, որ վաւերական հրաշակերտ մըն է և որուն յաջողութիւնը չանթահարիչ եղաւ: Արուեստին բոլոր նրբութիւններուն ու գաղտնիքներուն թափանցած ու տիրացած մեծ գրողի մը հանճարը կը յայտնուէր հոտ, բոլոնիական պատմութեան ամէնէն եղբերակական չրջաններէն մէկուն զմայլելի այդ յիշակոչումին մէջ, իր մեծվայելուչ չրջանկարով, հրաշափառ գունագեղութիւնով ու վսեմին սահմանները թեւակոխող նկարունութիւնով, և որուն յուզիչութեանը, անկեղծ քնարերգականութեան շունչին, կեանքի ներուժութեանը, տրամաթիքի զգացումին, վիպական խռովքին ու շահագրգռականութեանը, թերեւս ոչ ոք կրցած է հաւասարիլ Թալսթոյէն ու Յլօպէրէն զատ: Նւ սակայն, պէտք է դիտել որ, բոլոնիական գրականութիւնը, խիստ ճոխ ու վերջին աստիճան բաղձասեւ, տեսակալից, երվներանգ, մէկէ աւելի ընտիր պատմական վիպագիրներ կը համրէ իր մէջ: Աւելի քիչ համ առած եմ իր միւս վէպերէն՝ որոնք այնքան մեծափայլ սկսուած չարքին շարունակութիւնը եղան, և սակայն ամենաաքանչելի կտորները չէ որ կը պակսին անոնց, այլ մանաւանդ Ջոնեղիլին մէջ. բայց դժբաղդաբար, ցաւալի է յոյժ որ ամբողջութիւնը խանգարուած է անտանելի երկարարանութիւններով:

Բայց անդրանիկ հատորը անարատ զուլիս — Դործոց մըն է, տիպարը՝ պատմական վէպին: Անկէց վերջն է որ հրատարակուեցաւ. Քուօ Վասիլը, որուն տիեզերական յաջողութիւնը ամէն մարդ գիտէ, յետոյ Բօլանգիէի Բնագիւղը՝ զոր ես իմ մասիս Սէնքիէվիձի գլխաւոր գործը կը դաւանիմ, իբր ժամանակակից վէպ: հրաշալի՝ վերլուծումի իր նրբութիւնով:

բարձրերու նկարագրութեան կարկառութիւնով, նկարագրներու ճշտութիւնով և իմաստասիրական ոգիի խորունկութիւնով և որուն արուեստագիտական արժանիքը, ա'լ ասիէ ետքը առանց չափազանցութեան, կ'արտօնէ մեզ Սէնքիէվիճը դասելու արդի վէպին անմահ վարպետներուն կարգը:

Այդ արտասովոր գիրքը գրող մարդը, ամէնէն մեծ մարդուն հաւասար նկատուելու արժանի է, հաւասար՝ Թոլսթոյի և Տասթօյէվսքիի՝ Ռուսիոյ մէջ. Պալգաքի և Ֆլօպերի՝ Ֆրանսայի մէջ. Տիքքնսի և Ճօրճ Էլլըթի՝ Անգլիոյ մէջ. Կէօթէի՝ Գերմանիոյ մէջ: Տարակոյս չիկայ որ խօսքս Վիլհելմ Մալքերի և Բեքտիկան խնամութիւններու Կէօթէին վերայ է:

* *

Վարչաւիտի մէջ, մէկէ աւելի անգամներ առիթը ունեցած եմ Հէնրիք Սէնքիէվիճին հանդիպելու: Գրական կեանքի մէջ իմ նախափորձերուն ատեն, երբ հասարակութեան կողմէ նպաստաւոր ու ներողամիտ ընդունելութիւն գտած առաջին թատերախաղերս, միւս կողմէ վարչական մամուլին մէջ բուռն վիճաբանութիւններու և խիստ չափէ դուրս, սանձարձակ յարձակումներու տեղի կուտային, Քու Վասիլի հեղինակը ինծի նրկատմամբ միշտ սիրալիր յարգամեծարութիւն մը և բարեացակամութիւն մը ցոյց տուած է, որոնց երախտագէտ յիշատակը կը պահեմ առ յաւիտ:

Կը յիշեմ նոյն իսկ որ, այդ թուականին, Կադէքս Բօյսֆաի մէջ, իմ առաջին տաւաններէս մէկուն, Ուրիշին հացքին վրայ, — որուն անունը միայն կը յիշեմ այսօր, — երկար յօդուած մը գրեց, որ հակառակ անտորադիր ըլլալուն, մեծ յուզում առաջ բերաւ, և ուր իրենց անկեղծութեանը մէջ խիստ արգարադատ դիտողութիւններու հետ կը յայտնէր համակրութիւն մը՝ որ այնքան աւելի թանկարժէք կը դառնար որչափ ես՝ իբր թատերական հեղինակ, անխնայ հարուածուելու վրայ էի, քննադատներու անհուն մեծամասնութեան կողմէն և քաջութիւն մը պէտք էր գիտ պաշտպանելու համար:

Անկէ ի վեր, բօլօնիական մամուլին լեզուն, բարեբաղդաբար շատ փոխուած է ինծի նկատմամբ, և այս յիշատակները հին ատելութիւններ քրքրելու համար չէ որ մէջ կը բերեմ, — ես բնաւ ուր չունիմ ոչ մէկու դէմ, կը մոռնամ գրական բոլոր արդարացի ու անիրաւ (ոչ մէկը կարեւորութիւն ունի) յարձակումները. բայց միշտ կը յիշեմ համակրութեան ու բարեացակամութեան դոյզնը շան մը. — այս յօդուածը անձնական յիշատակով մը փակելու առիթով, իմ միակ փափաքս է յատկանշական կերպով մը ցոյց տալ թէ ինչպէս մեծանուն գրագէտը միեւնոյն ատեն galant մարդ մը և իր ամենէն համեստ արուեստակիրներուն հանդէպ իսկ մեծարասէր ու ներողամիտ է: Անձնական այն պատուական յարաբերութիւնները զորս միշտ տածած եմ Սէնքիէվիճի հետ, մէկ ցաւ մը միայն ներշնչած են ինծի. պէտք եղածին կամ ուղածին չափ շատ, հետը չի կրնալ տեսնուելու ցաւը:

Այն վերջին անգամուն որ հաճոյքը ունեցայ իրեն հետ խօսելու, եթէ չեմ սխալիր, երեկոյթի մը մէջ էր, որ տեղի կ'ունենար Պ. Կրօսմանի, Բօլօնիացի տաղանդաւոր երգահանին տունին մէջ, որ միեւնոյն ատեն հեղինակն է Ուրուակաճը օբերալին և որուն սալօնը, այն ատենները, կը յաճախէր Վարչաւիտի գրական ու արուեստագիտական աշխարհը: Հոն կը տեսնայիր բօլօնիական վաղեմի քաղաքավարութեան ու ասպնջականութեան սխրալի աւանդութիւնները որոնք բարձի թողի եղած են ատենէ մը ի վեր: Կը յիշեմ տակաւին Սէնքիէվիճի սրամտութիւնը ու աւելնը՝ իր անարհիկ խօսեղագէտ (causeur mondain) և խորունկ ու հանճարեղ այն ակնարկները՝ զորս կը բացայայտէր գրական արուեստի ու ոգիի ոլորտներուն մէջ, թովիչ բարեշնորհութիւնով և հրապուրող սխրալի պարզունակութիւնով մը:

ՍԹԱՆԻՍԼԱՍ ՌԶՂՎԻԻՍԻ.

Թարգմ. ԶԻՅԵՒ-ՍԱՐԱՅ.

ԳԼԽՈՒՄ ԵԿԱԾՆԵՐԷՆ

ՊԱՏՐԱՆՔՆԵՐ

Ա.

Միեւնոյն տան մէջ կը բնակէին մայրը ու աղջիկը, երկուքն ալ որբեւայրի:

Ո՛ւր, ե՛րբ, հազար ութ հարիւր քանի՞ն... Անօգուտ մանրամասնութիւններ, ձեզի համար, այս ամէնը որ նոյն իսկ եթէ ճշդելու ելլէի, բան մը չպիտի կրնայի աւելցնել պատմութեանս հմայքին վրայ որմէ ոչինչ պիտի պակսէր՝ եթէ այդ պատմութիւնը տեղի ունեցած ըլլար Իզմիր կամ Պոլիս, Մալկարա կամ Նիւ-Եորք, Բարիզ կամ Թոմպուքթու:

Մայրը՝ սանկ քառսունընէինգ տարու մը կար—դեռ ուտուելիք տարիք մը—և աղջիկը հազիւ քսանընորս: Անուշ էր, ան որքան կըրնաք երեւակայել և գեղանի՝ որքան կը փափաքէիք որ ըլլային բոլոր կիները:

Որովհետեւ ամէն պատմութիւններու հերոսուհիները անպատճառ անուն մը ունենալու են, անպատեհութիւն մը չեմ տեսներ եթէ մայրը կոչեմ Էզմէրալտա և աղջիկը՝ Սաֆօ:

Բայց խնդիրը անուաներու վրայ չէ. ասիկա էն յետին կարեւորութիւնը՝ ունեցող պարագան է գործին մէջ:

Երկուքն ալ որբեւայրի էին, ըսի, և հոս կանգ կ'առնեմ:

Որբեւայրի... ի՞նչ ազուոր, ի՞նչ թեւալորիչ, որքա՛ն սադրանքով լեցուն բառ:

Որբեւայրիները՝ կարգուած կիներու հետ, լաւագոյն ապացոյցներն են Աստուածային բարութեան և միակ երկու դեղահարաչ բաները որոնք դուրս եկած ըլլան Արարչադործութեան ձեռքէն:

Որբեւայրին կէս մարած հրաբուխն է՝ նորէն բռնկելու արամադիր:

Որբեւայրին այն երջանիկ արարածն է որ վայելած է բոլոր ազուոր բաները ամուսնութեան և կորսնցուցած է՝ ինչ որ կայ անոր մէջ անհաշուութելի... ամուսինը:

Որբեւայրին բարի է. գիտէ ամէն բանին

արժէքը, ապերախտ չըլլար, կը դնահատէ ինչ որ կ'ընծայես իրեն և ետ կը դարձնէ ինչ որ փոխ կուտաս:

Իրենց այս բոլոր առաքինութիւնները ճանչցող միակ ամուրին ես չեմ:

Այս բոլոր առաքինութիւններով օժտուած էր Սաֆօն որուն ամուսինը՝ խեղճ Վիքթորը —որ բարեկամս էր երբեմն, —կանուխէն ձգած դացած էր այս վիշտերու հովիտը, հազիւ դիմանալով այնքան որքան կը դիմանան լաւագոյն կօշիկները աշխարհիս... տարի մը միայն:

Եթէ մարդը փոխանակ տարի մը ապրելու իր կնոջ հետ, քսանընորս ժամ միայն ապրէր, այս օր փոխանակ զինքը կօշիկի նմանցնելու, վարդի պիտի նմանցնէի, ինչպէս սովոր ենք ընել, մենք գրողներս:

Յանցանքը իմս չէ, թո՛ղ ժամանակին մեռնէր:

Խեղճ բարի տղան չուղելով անյիշատակ վերանալ այս երկրագունդէս, թողուցած էր հոս այրի մը որմէ աւելի պաշտելի, չօշակելի, գրկուելիք յիշատակարան մը չեմ տեսած կեանքիս մէջ:

Այն ապուշներէն չէր Վիքթոր որ մեռած ատենին ձեռագիր մը, թուղթի կտոր մը, ծխատուփ մը, գործածուած գաւազան մը կամ հին գիրք մը կը թողուն, souvenir բառը լրան գրուած՝ բարեկամներու հասցէին:

Սոսուն, շարժուն, կենսալի միւս յիշատակարանը՝ Սաֆօն՝ այն քիչ գործածուած գիրքն էր որուն էջերը թղթատել ամէն բարեկամներու համար նուիրական պարտականութիւն մըն էր, չի մոռնալու համար ան... որ ոչ ևս էր:

Երբ գրքի մը նմանցնելու կ'ելլեմ Սաֆօն, անպատճառ կը սախուլի՜մ աւելցնել թէ գիրք մըն էր ան՝ նուրբ բայց դիմացկուն կազմով, քայքայուելու վտանգէն զերծ, գիրք մը վերջապէս doré sur tranches!

Ես որ չատ կը սիրէի գիրքերը—դեռ աղբ խաւք վրաս է—ստէպ կ'երթայի իրենց տունը, նախ իրրեւ բարեկամը մեռնողին և ապա ու մանաւանդ բարեկամը մնացողներուն:

Սաֆօ... տարաբաղդ աղջիկը, այնքան վշտաբեկ հոգի մը ունէր, այնքան խոցոտ-

ուած սիրտ մը, այնքան անմխիթար էր որ արցունքը աչքերէն չէր պակսեր և ահա՛ ինչու, մենք՝ իր բարեկամները՝ մասնաւոր փութկոտութիւն մը կը դնէինք տեանալու համար թէ մեր մէջէն ամէնէն առաջ ո՞վ պիտի ըլլար իր թաշկինակը հասցնող այդ ազուրկ աչքերուն արցունքները սրբելու համար:

Սաֆօ վերէն վար սեւերու մէջ թաթխուած, հրաշալիօրէն գեղեցիկ, երբ ազուրկ կ'արտասուէր, կը նմանէր այն մերկ աղամանդին որ սեւ թաւիչի վրայ ընկողմանած բոբո բոբո կը փայլի և որ մարդուս բերնին ջուրերը վազցնել կուտայ, ցուցափեղկին ապակիին ետեւէն:

Օր մը եկաւ սակայն որ ինքնայատուկ սեփականութեան գաղափարը ճիւղի պէս չարճիկեց միտքս, և որոշեցի իր հետ ամուսնանալ: Բայ ի մօրկանը հաւանութենէն, ամէն բան սարքած էինք մէջերնիս:

—Անգամ մը մամային հետ խօսէ, հոն չեղած ատենս. չեմ կարծեր որ չէ ըսէ:

Պատուիրածին պէս ըրի:

Կիրակի առտու մը երբ Սաֆօ եկեղեցի գացած էր մինակը, չիփ չիտակ տուներնին գացի:

Կէս ժամ զիս սպասցնելէ ետքը, Տիկին Էդմէրալտա երեւցաւ, իննամով շակուած *négligé* արդուզարդի մը մէջ:

Ժպտա կը հոսէր այդ շրթներէն, և խրախուսող, ոգեւորող, կիզիչ ակնարկներ դուրս կը ցայտէին իր խոշոր, սև աչքերէն:

Տասը տարու պղտիկցած էր այդ օրը կարծես և չեմ գիտեր ինչ մը կար շարժուածքին մէջ որ զգլխիչ, չիթթեցնող զգացումներ կը յարուցանէր ներսիցիս:

Spring flowerի բարկ և գինովցնող *parfum* մը ա՛լ առաւել զրգռիչ հանգամանք մը կուտար մեր *tête à tête*ին և ապահովապէս մայրը աղջիկը մոռցնել պիտի տար, եթէ այս վերջինին համար տուած որոշումս հաստատ, անընկճելի արմատներ դրած չըլլար որտիս և ուղեղիս մէջ:

—Խիստ ուշախ եմ, Տիկին, որ բաղդը կ'ունենամ ձեզի այսօր մինակ գտնալու:

—Հաճոյքը փոխադարձ է, Պարոն:

—Անշուշտ դիտած էք որ իմ շարունակական այցելութիւններս պարզ քաղաքավարական ձեւակերպութիւններ ըլլալէ աւելի, ուխտագնացութիւն մըն են յոսս պաշտուած պատկերի մը...

—Complimentէն շնորհակալ եմ:

—Compliment չէ այս, Տիկին, այլ պարզ խոստովանութիւն մը, պատուաւոր, ճշմարիտ և հաշուուած զգացումի մը արտայայտութիւնը:

—Ատոր կը սպասէի արդէն:

—Լա՛ւ ուրեմն, կը ներէ՞ք որ աւելի բաց խօսիմ, անկեղծ ըլլամ և ըսեմ ինչ որ կը մտածեմ:

—Ձեզի հանգէպ ունեցած իմ վերաբերումս, շատոնց այդ քաջութիւնը տուած ըլլալու էր ձեզի:

Եւ այս խօսքերը արտասանած միջոցին, աթոռը ա՛լ աւելի կը մօտեցնէ իմինիս:

Քաջալերուած այս գորովալիւր ընդունելութենէն, կը շարունակեմ խօսքս:

—Բանի որ այդքան ազնիւ տրամադրութիւն մը ցոյց կուտաք իմ մասին, որուն համար միշտ երախտապարտ պիտի մնամ, սիրելի Տիկին, կ'օգտուիմ այսօր ձեր աղջկան բացակայութենէն, մտերմաբար ձեզի հարցնելու թէ արդեօք զգացած սէրս փոխանակուած է:

—Թերեւս ձեր ենթադրածէն աւելի:

Քիչ մը ևս կը մօտեցնէ աթոռը, քիթս մանալու աստիճան:

Ի՛նչ բարի զոքանչ մը պիտի ունենամ, հէ՛:

—Տեսէ՛ք, Տիկին, ուղղակի նպատակս պիտի բացատրեմ: Այլ ևս չարչարանք մըն է ինծի համար այս անորոշ երթուելը. հաւատացէ՛ք որ սիրոյս մէջ անկեղծ եմ և ամէն գոհողութիւններու պատրաստ եմ ձեր վստահութիւնը վայելելու համար: Վերջ մը դրէք այս տառապանքներուս, մեղքեցէ՛ք զիս, Տիկին, ըսէ՛ք թէ սէրս զիս չէ կուրցուցած, և թէ չեմ խաբուած կարծելով գտնել ձեր մօտ այն համակրութիւնը որուն...:

Մատուցները մազերուս մէջ կը մխրճէ և անոյ ձայնով մը՝

—Շատոնց է որ այդ սէրը կը գգաք և

եթէ այդպէս է, ինչո՞ւ չըսիք մինչև հիմայ :
— Մերժումի մը վախը, չի հասկցուելու տարակոյտը, պարագաներու բերումը, այս ամէնը արդեւք եղան մինչև հիմայ սիրտս ձեզի բանալու, բայց այսօր քանիոր ինքն ալ հոս չէ...

— Աղէկ ըսիք, պարապ տեղը ժամանակ չի կորսնցնենք. հիմա ուր է նէ կուգայ, եւ կէք ներս :

— Ո՞ւր

— Ննջասենեակս...

Խենդեցա՞ւ, ի՞նչ եղաւ իր ննջասենեակը, ինչո՞ւ, արդե՞ք... : Բար կը կտրիմ և այս թիւրիմացութիւնը երկար չի քշելու համար, վրայ կը բերեմ :

— Բայց, Տիկին...

— Հոգ չէ, եթէ կը վախնաք, սպասուհին ալ պատրուակով մը դուրս կը ճամբւմ :

Աստուծո՞ւ էր, ճիշդ այդ վայրկեանին դուռը զարնուեցաւ. ապա թէ ոչ, չեմ գիտեր թէ ի՞նչ պիտի ըլլար :

Ես աղջկանը համար երթամ և մայրը վրան առնէ՞... :

ՔՐԻՉԱՆԹԷՄ

ՎՈՍՓՈՐԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԲԻՐԷՃ-ՊՈԻՆՈՒ, 23 Սեպտեմբեր
Երեքշաբթի

Անձրեւոտ ու ցրտագին ամառը քանի իր վախճանին կը մօտենայ՝ այնքան աւելի դաղջ ու դեղեցիկ կը դառնայ, բնութեան մէկ քրմահաճոյքովը որ երբեմն դէպի իրենց կեանքին աշունը համեող մարդերուն կամ կլինեալուն կուտայ կտրով մը և հրապոյր մը որոնք երիտասարդութեան յատուկ են : Եւ այս անակնկալ աղուորութիւնն էր բնութեան, որ երկու չաբաթէ ի վեր վար դնել տուաւ ինծի գրիչս, նոյն իսկ Մասիսի թղթակցութիւններս ընդհատելու աստիճան, կարդալու ալ չառ քիչ տրամադրութիւն թողլով վրաս : Ո՞վ ձեզմէ պիտի կրնայ ըսել թէ ինքն ալ չէ ունեցած իր dolce far nienteի վայրկեանները, գիւղի մը անկիւնը առանձնացած

պահուն, գործի աշխարհէն հեռու որուն մըթնոլորտը ինքնին կազդուրում և աշխոյժ է : Բայց հոս՝ արտին մէջ աշխատող մշակներու, ցորեկ դիչեր ծովէն չի բաժնուող ձկնորսներու տեսքը ներշնչում մը, գրգիռ մը չի տար ինծի փութկոտութեան. ու ժամերով կը մընամ՝ դիտելով անոնց համբերատար աշխատանքը, բաց երկինքին տակ, հողին ու ջուրին վրայ, ուր եթէ մրցում մը կայ՝ բաղդէն սպասուած մրցում մըն է, երբ մէկ ուսկանը միւսէն աւելի լեցուն կ'ըլլայ կամ մէկ արտը միւսէն աւելի պարարտ : Զիրար չի քաշել, իրարու միասին բաղձալ և յաջողութեան նախանձիլ, ձախողուած մը անպատճառ ընկերոջ մը վերագրել ուղել՝ դոհի երեւոյթ մը տալով ինքզինքին և անյաջողութեան պարագային զիրար բանբասել, — երեւոյթներ որոնք չաա սովորական դարձած են կարգ մը գործի ասպարէզներու մէջ, — այս մարդոց բարեբուն մէջ գոյութիւն չունին. անոր համար, տեսակ մը սքանչացումով կը դիտեմ իրենց գործունէութիւնը :

Երէկ ձկնորս մը խօսեցնել տուի. կայտառ երիտասարդ մը որ մինչև Սև ծովին բերանները երթալով, փոթորկալից օդին, ալիքին, բուն դէմ կը մաքառի ու կեանքը վտանգի կը դնէ շատ անգամ, ձուկի ահագին պաշարով մը վերադառնալու նախանձախնդրութեամբ որ որքան ապրուստի՝ նոյնքան ալ արժանապատուութեան խնդիր մըն է իրեն համար : Ծերուկ մայր մը ունի և ծաղկատի նշանած մը. աւելի սիրահարուած են իրարու քան նշանուած. նշանախօսութեան ձեւակերպութիւնները բան մը պիտի պակսեցնէին իրենց անխառն, անկեղծ սէրէն որ ո՛չ դրամով խոսուած է ո՛չ ալ խնամիական նըկատումներու. տղան «հոգի կուտայ» աղջկանը վրայ, ու աղջիկն ալ արհամարհած է ուրիշ թեկնածուներ. երիտասարդ ձկնորսը երջանիկ կը համարի ինքզինքը հարսանեկան ծախքի անհրաժեշտ գումարը մէկդի դնելով փոքրիկ խնայողութիւններով. ու ասուն ատեն ալ, նուէրներ կը բերէ նշանածին. կարմիր ժապաւէն մը՝ անոր խարտեալ մաղերուն համար, մէտայեցման, օղեր, դրա գեղջուկ յոյն կի-

ներ կը ծախեն խաւաքարտէ տիիկներու մէջ .
— ձիշդ հակառակը Գրիգորանթէմի այնքան հա-
րազատորէն գծած պատկերին ուր շարունակ
մանչն է որ կը նպաստաւորութի աղջկան կող-
մէն , ունեւոր դասակարգին մէջ :

Խաչի տօնը անցաւ , ամէն տարուան պէս
տեսակ մը ոգեւորութիւն սփռելով Վոսփորի
գիւղերուն վրայ , երկու օր : Վարձու սենեակ-
ները , կառքերը , նաւակները , բացօթեայ դը-
սատեղիները բաւական շահարեր առուտուր
մը ըրին , վերջինը ամառնային եղանակին որ
իր ոգեւարին մէջ կը գտնուի : Հին բարքե-
րու մնացորդ մըն է անշուշտ , որ ամառնային
դըօսանքները՝ ժողովրդական դասին համար
մանաւանդ՝ կը շեշտուին կրօնային տօներուն ,
Վարդապետ , Աստուածածին , Խաչ : Ու եկե-
ղեցական արարողութեանց կը յաջորդեն պը-
տոյսներ , խրախճանքներ , մայրաքաղաքին ա-
մէն կողմը ուր որ մարդագետիկներ , ծառա-
տաններ , ծովափներ կան՝ դըօսավայրի ծա-
ռայող :

Ատոնցմէ ամէնէն հիանալին է , այս կող-
մերը , այն ընդարձակ մարգագետինը որ «Չա-
յիր» կը կոչուի : Զարմանալի է որ , Պէօյիւք-
տէքէի ու Թարապիայի նման երկու աշխար-
հիկ արուարձաններու մէջտեղ , ուր չէնքերու
ձօխութիւնները իրարու հետ կը մըցին , այս
կանանչ դաշտը բան մը չէ կորսնցուցած իր
կուսութենէն , ու կը մնայ միշտ նոյն գեղ-
ջուկ անկիւնը ուր դարաւոր ծառի մը հա-
տարուն խոռոջը սրճարանի տեղ կը ծառայէ
և ուր լսուող միակի ուսագարանը Զիֆքե-ճա-
լարան է , ուսկից կ'ախորժին պտոյտի ելլող
այն գեղարուեստասէրներն իսկ որոնց այնքան
ընտանի ու սիրելի է դաշնակը , իրենց սա-
լօններուն մէջ :

Մէկ ծայրը՝ բլուրներու շղթայի մը խառ-
նուած ու միւս ծայրը ծովուն , Վերին Վոս-
փորի ամէնէն ժողովրդական ու ամէնէն ալ
ազնուապետական դըօսավայրն է այդ «Չա-
յիր» ուր Եւրոպացիները յօրն քեցնիս կը
խաղան մինչ անոնցմէ քանի մը քայլ անդին
գնչու սղաքներ կը պարեն ու կը ցատքարեն :
Վոսփորը իր է՛ն նկարագեղ ծովախորշերէն

մէկը կը կազմէ այդ կիսաբոլորակին մէջ ,
լճակի մը պէս որուն վրայէն նաւարկող մա-
կոյններն իսկ մեղկութիւն մը ունին , հան-
դարտ ու յամրընթաց գնացքով : Ծով ու
ցամաք , կորսուած անկիւն մըն են կարծես
այդտեղ , հեռու , շատ հեռու քաղաքին աղ-
մուկներէն որ սակայն քայլ մը անդին կը
սկսի : Այս տեղ ըլլալու է որ Թովմաս Թէր-
զեան , —մեր միշտ սիրելի ու ճամարիտ բա-
նաստեղծը՝ թէեւ շատոնց թողած ըլլայ գրի-
չը , —ներշնչուած է , իր երիտասարդութեանը ,
հայերէնի վերածելու Սանդա-Լուչիան , որ
հակառակ բաւական հին սիրերգ մը ըլլալուն՝
կ'երգուի մինչև այսօր , իրեւ է՛ն զգայնոտ
ու տարփոտ երգը Վոսփորի նուիրուած , և
վերջին քառեակը մանաւանդ , իր պարզու-
թեանը մէջ , այնքան խօսուն է երիտա-
սարդ սիրտերու համար .

Կեանքն ալ այսպէս , ո՛վ կոյս ,

Ծով մ'ե եւ գիւտեր ,

Անոր վրայ սփռէ յոյս :

Միայն անմահ Սէր ...

Չեմ գիտեր ի՛նչ քմահաճոյք էր որ զըր-
դեց դիս , ուրբաթ գիշեր , մինչև Եէնի-Մա-
հալլէի ամառնային մանրանկար թատրոնը եր-
թալ , հանդիսատես ըլլալու Մնակեան խում-
բին միակ ներկայացմանը որ նոյն հետաքրք-
րութիւնը շարժած էր այնտեղ՝ ինչ որ Բօք-
լէնի կամ Սառա-Պէռնարի մէկ Tournéօն կը
շարժէ Բերայի մէջ : Որչափ ալ որ թատրոն
բառը իր է՛ն պզտիկ իմաստովը առնելու է ,
ասով հանդերձ մի՛ զարմանաք՝ եթէ ըսեմ թէ
քսան օթեակ ձեւացուցուած էր , կանանչ ներ-
կուած տաղաւարիկներ ուր կը փայլէին սակայն ,
նոյն իսկ Պէօյիւքտէքէէն եկած շնորհագեղ
Տիկիկներ : Վարը , հողին վրայ , սրճարանին
աթոռները միացուած , կը կազմէին բառ-
քեւ մը որ իրապէս «ասեղ ձգելու տեղ չի-
կար» : Իմ ճաշակովս , շրջանակին աններդաշ-
նակ չէի գտներ արեւելեան ուսագածուներու
խումբը , որ հեշտօրոր , մեղամաղձոտ եղա-
նակներ կը նուագէր միջնարարներուն , պիս-
տակավաճառին ու ջրավաճառին՝ կոչելովը

ընդմիջուած։ Այս բոլոր եղականութիւններու վրա հանդերձ, ներկայացումը չա՛տ յաջող էր ու համբերութիւն տուաւ մեզի չորս ժամ դամուած մնալու մեր ակօռներուն վրայ անշարժ։ Ներկայացումէն աւելի, հետաքրքրութիւնս կը շարժէին դիտողութեան կամ գրահատումի ձայները որոնք կը բարձրանային շուրջս, աջէն ձախէն, դերակատարներուն ուղղուած, բարկացող շեշտեր Ալիքսանեանին դէմ, — յաւիտենական հակառակորդը, — ու կարեկցութիւն՝ Տիկին Հէքիմեանին հեծեծանքներուն։ Թատերասաղը, Խեղճ կիներ, երկար պիտի ըլլայ պատմել, եթէ հետաքրքրուիք իսկ. ըսեմ միայն, աւանդական բացատրութեամբը, թէ «Մնակեանի repertoire-ին լաւագոյն տուամներէն մէկն էր, բարոյալից, հետաքրքրաշարժ», ճարտար ու տխուր հիւսուածքներով, որ ճշմարիտ անձկութեան մը, հե ի հե հետաքրքրութեան մը մէջ կը պահէր հանդիսականները, և ծափէ աւելի՛ արցունք խեց անոնցմէ։ Եղաւ վայրկեան մը, ուր հարիւրի չափ թաշկինակներ մէկանց կը ծածկէին լացողներուն այտերը։ Եւ երբ Ալիքսանեան, — ասպետ Բալմիէոյի — իր պատուաւոր երիտասարդ ձեւացող խաբերայի դերին մէջ, ձեռքերը շփելով՝ կ'ըսէր հրճուազին. — «Կէս ժամ ետքը ամուսնացած պիտի ըլլամ Բօլէթիս հետ» — լսեցի հանդիսական մը որ բարձրաձայն կ'ըսէր, զայրացած շեշտով մը — «Հիմայ պիտի խայտառակուիս դուն, անպիտան, և ամուսնանալը կը տեսնաս»։ Ձի՛ դարմացայ այս միամիտ մարդուն վրայ, որ ինքզինքը իրականութեան մը հանդէպ կը կարծէր. ընդհակառակը, այս ընդմիջումները, բացօթեայ սրահէն բարձրացող աղաղակները պատիւ կը բերէին մեր դերասաններուն ու դերասանուհիներուն որոնք գիտցած էին իրականին հմայքը տալ։

Եւ ի՛նչ տոկունութիւն, Մնակեանին ու իր խումբին բեմական աշխատանքը. առջի գիշերը՝ ներկայացում տուած էին Մաքրիզիւղ, Նոյն ցորեկը՝ Գառըղիւղ, գիշերը՝ Սարընար և յաջորդ իրիկունքը Իսկիւտար։ Եւրոպական որ և է չրջուն խումբ, իր բոլոր առաւելութիւններովը մէկտեղ, այս տեսա-

կէտով վար պիտի մնար մերինէն։ Տեսմին յուղիչ տեսարաններուն ու ծառադարձ «Թատերասրահին» ծիծաղելի միջադէպներուն հետեւելով տարտամօրէն, միտքս աւելի սուեռած կը մնար դէպի դերասաններուն ու դերասանուհիներուն անձը որոնցմէ նորագոյնը իսկ՝ երսուն տարուան բեմական գործունէութիւն մը ունի իր ետին։ Մնակեան, Ալիքսանեան, Հօլաս, Տիկին Հէքիմեան, Պիննէմէճեան ամուսինները, Բերա, Պոլիս, մեծ բեմերու վրայ շքեղ ներկայացումներու մասնակցած, քաղքէ քաղք շրջած՝ փայլուն յաջողութիւններով, կը պահէին դեռ Նոյն կորովը, Նոյն ոգեւորութիւնը — մինչև իսկ այս պղտիկ բեմին վրայ ուր տուփի մը մէջ սեղմուած խամաճիկներու երեւոյթ ունէին — յարատեւութեան ոգիով մը ու տկարանալ չգիտցող եռանդով մը որ իրենց դերասանական ճարտարութեանը չափ ու անկէ՛ ալ աւելի արժանի է ծափահարուելու և դնահատուելու։

ՄԵՆԱՍԻՐ

ՅԻՇԱՏԱԿՆ

— 1907 —

Փրփուրները փառափին

Կ'երկնեն երազն հեռաւեհ

Իմ խոնջ հոգւոյս մըրափին.

Յոյսի շող մը գիս յաւեհ

Կը կապէ նուրբ կապոյսին.

Կը խոսանայ ծովն անհուն.

Ու այեակներ կը ժպտին.

Հոգւոյս տեղոս իղձերուն։

Անոյ տարցունք մը սրբիս

Խուն կը բերէ զովասուն,

Ու դուն ինձի՛ կը մօտիս

Ջիւնց ներհարով մը խօսուն։

Ու սիրավիտ, ես յանկարծ

Անցիւք տեղեկ խելայեղ,

Կը պըլլուիմ, մըտարծարծ

Յիշատակիդ, ամեն հեղ։

Մ. Կ. Մ.

ԽՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

Կայս. զնորհ. — Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Կայսրը բարեհաճած է Բ. կարգի Մէճիտիէ պատուանշան չնորհել Նիկոմիդիոյ առաջնորդ Տ. Ստեփաննոս արքեպիսկ. Յովակիմեանի և Գ. կարգի Մէճիտիէ Տիգրան էֆ. Բարադամեանի, անդամ Արմաշի իմամականութեան:

Թիֆլիզէն հասած լուրերու նայելով, Աստրախանի առաջնորդ Տ. Արիստակէս եպիսկ. Սեդրակեանց որ միւս առաջնորդներուն ու վանահայրերուն հետ Էջմիածին կը գտնուէր, Ռուսիոյ ներքին գործոց նախարար Պ. տը Բլէէվէի մէկ հեռագրին համաձայն՝ Ստաւրաքաղաքը ուղեւորներ է տեսակցելու համար նախարարին հետ որ հոն կը գտնուի: Թիֆլիզի մէջ տիրող կարծիքը սա է թէ, Պ. տը Բլէէվէ պէտք տեսած է Արիստակէս եպիսկ.ին հետ խորհրդակցելու Մայր Աթոռի գործերուն վրայ: — Կովկասի կուսակալ Կալիձին իշխանին հրամանով՝ Երեւանի նահանգապետը տեսակցութեան գացեր է Ս. Հայրապետին, ի ներկայութեան Պրոկուրորին եւ պետական ուրիշ ուժը պաշտօնէից:

Մկրտիչ Էմ. Էսաեանի մայրը՝ առաքինազարդ Տիկին Աննա Էսաեան, որ ամէն բարեգործական հաստատութեանց և աղքատախնամ ձեռնարկներու կը նպաստէ, այս անգամ ալ 200 օսմ. ոսկի նուիրեց Խանս գիւղի Գալֆայեան Որբանոցին վերանորոգութեան համար: Սոյն գումարը արդէն իսկ յանձնուած է Ս. Պատրիարք Հօր, որ հրամայեց չիւնութիւններն սկսիլ անմիջական կերպով:

Երուսաղեմի գործեր. — Խառն ժողովը իր չորեքյարթի օրուան նիստին մէջ, որ գումարուեցաւ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, մասնաւորապէս զբաղեցաւ Երուսաղէմի գործերով և նկատողութեան առաւ Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր ծանօթ պաշտօնագիրը (որուն բովանդակութիւնը հրատարակած ենք Մասիսի նախորդ թիւով) ի պատասխան Կեդր. Վարչութեան որոշումները հաղորդող Պատրիարքական պաշտօնագրին: Խորհրդակցութեանց պահ մը ներկայ գտնուե-

ցաւ նաև Երուսաղէմի Պատր. փոխանորդ Տ. Դէորդ եպիսկ. Երէցեան:

Խառն ժողովը, իր սոյն նիստին մէջ, կարգալէ ետքը Երուսաղէմէն հասած պաշտօնական թէ անպաշտօն բոլոր գրութիւնները, եւ լսելէ ետքը Երէցեան Սրբազանի բերանացի կերպով տուած լուսաբանութիւնները, Երուսաղէմի Ս. Պատրիարք Հօր հետ Վանքին խնդրոց վրայ ի դիմաց Կեդր. Վարչութեան տեսակցելու համար անմիջապէս յատուկ անձի մը Երուսաղէմ ղրկուիլը պատշաճ դատեց և սոյն պաշտօնը յանձնեց Պատրիարքարանի Վարչական Դիւանի տեսուչ Թէլեան Բարթող էֆ.ին որ իսկոյն ճամբայ պիտի ելլէ:

Ահա՛ գործնական և բանաւոր որոշում մը որ ընդհանուր գոհունակութիւն պիտի պատճառէ, ամէնուս ծանօթ ըլլալով յարգելի Դիւանապետին ո՛չ միայն վարչական կարողութիւնն ու փորձառութիւնը, այլ նաև ուղղամիտ մարդու անձնայատկութիւններն ու արժանիքը:

Տօքթ. Նեբուքա Էմ. Թիւեան, բարեյշատակ թուաբան «Միւսիւ Բասքալ»ի որդին, որ Տրապիզոն ուղեւորած էր ամուսնանալու համար քաղքին ծանօթ վաճառականներէն Կայծակ էֆ. Արապեանի աղջկան՝ Օր. Հայկանոյչի հետ, մէկ ամսուան բացակայութենէ ետքը մայրաքաղաքս վերադարձաւ իր նորապսակ Տիկնոջ հետ, համակիր տպաւորութիւն մը թողլով Տրապիզոնի մէջ: Երիտասարդ բժիշկը, որ Մաքրիգիւղ հաստատուած է Եւրոպայէն դալէն ի վեր, ըստ առաջնոյն կը շարունակէ հիւանդներ ընդունիլ և հիւանդներու այցելել նոյն արուարձանին մէջ եւ անկէ դուրս ալ, ուր որ գիմում կ'ըլլուի իր ճարտար խնամքներուն: Իր վերադարձը ճշմարիտ հաճոյքով մը ողջունուեցաւ մասնաւորաբար Մաքրիգիւղի մէջ ուր մօտէն դնահատուած են իր բժշկական կարողութիւնը եւ բարեհամբոյր բնաւորութիւնը:

ԻԶՄԻՐԻ Հայոց Ընթերցաստանը իր 33րդ տարեշրջանի տեղեկագիրը հրատարակեց որուն մուտքի գումարն է 9139.75 եւ ծախքի գումարը 7889.50 զրոյ: — Պատրաստ զրամ. 1250.25: Տեղեկագիրը կը պարդէ մանրամասն ու կանոնաւոր համարատուութիւն մը որ պատիւ կը բերէ այդ հաստատութեան վարիչներուն:

ԼԻԼԻԵՆ ՄՕՐՐԻՍ

(LILLIAN MORRIS)

4.

Գրեց ՀէնՐիօ Սէնթիէ-Լիօ.

Փարզմ. Չիֆօէ-ՍԱՐԱՅ.

Անքիծ հոգի մը սիրոյ պեմին վրայ կ'ընկրկի ու կը սարսափի, քայց կըղզայ որ պիտի պարտաւորուի անցնիլ անկէջ և կը տկարանայ, որով Լիլիէն երազի մը մէջ ընկըղմած կը թուէր և երբ հասկցայ թէ ինչ զգացումներ կը յուզուէին անոր մէջ, երջանկութիւնս ու հրճուանքս տփնչափ սաստիկ եղանոր, չունչս գրեթէ բռնուեցաւ կործքիս տակ: Չեմ գիտեր թէ ինչ որ զգացի այդ պահուն պատուաբեր էր ինծի համար, բայց երբ առտուն անցայ իր առջեւէն և նշմարեցի զինքը, աչքերը վայրահակ, ինծի անանկ եկաւ որ մեծ յաղթանակ մը տարած էի և յաղթուողները կը փռուէին ոտքերուս տակ, ապրելու կամ մեռնելու համար ինչ սոսկ նշան մը ըսպատելով: Եւ սակայն աշխարհի բոլոր գանձերուն փոխարէն պիտի չուզէի այդ անմեղ աղանձակին միամտութենէն օգուտ քաղել և սիրտիս մէջ, սիրոյս հետ անշուն կարեկցութիւն մը թափ կ'առնէր:

Չարմանալի բան, հակառակ անոր որ մեր սիրտը ու միտքը միմիայն իրարմով էին զբաղած, ամբողջ օրը անցուցինք վշտացած, սրդողած անձերու պէս. այլ մանաւանդ, իբր թէ նոր անձկութիւն մը եկած արդիւած ըլլար մեզի, մեր առջի օրուան մտերմութեանը, վստահութեանը վերականգնէ: Միտքս կը չարչարէի, հետը գոնէ վայրկեան մը մինակ մը նալու միջոց մը գտնալու համար, բայց չէի գտնար: Բարեբաղդաբար Մօրքուր էթքինս օգնութեան հասաւ ինծի. եկաւ յայտարարել որ շեռատի աղջիկը աւելի մարդանքի պէտք ունէր և վակօնի մը մէջ բանտարկուած մնալը կրնար վնասակար ըլլալ իր առողջութեան: Ես ալ բնականաբար պնդեցի այդ բանին վրայ և հրամայեցի Սէմիսընին որ ձի մը թամբէ: Կնկան թամբ չունէինք, բայց ետին առջին բարձրադիր, տեսակ մը մեքսիկեան թամբ, այնպէս ինչպէս մարգագետնի

սահմանակից բնակիչները սովոր են գործածել, չատ աղէկ կը բռնէր անոր տեղը: Յանձնարարեցի Լիլիէնի որ ես չի մնայ և զիս բնաւ աչքէ չի կորսնցնէ: Թողունք որ մօլորիլը շատ դժուար էր մարգագետններուն մէջ. այն մարդիկ զորս որսորդութեան համար ամէն կողմ կը խրկէի, հսկողութեան շատ փր ու շատ ընդարձակ շրջանակով մը կը պատէին կարաւանը, Հնդիկներէն ալ վախնալու բան մը չունէինք, ինչու որ անոնք մարգագետններու այս մասին մէջ, մեծ որսորդութիւններու եղանակին միայն կուգային: Բայց մեր ճամբուն հարաւի կողմը, անտառներուն մէջ կը վխտային վայրի գազանները և կարգ մը նախազուշութիւններ աւելորդ ըլլալէ շատ հեռու էին:

Ճիտակը յոյսս աւելի ան էր որ, Լիլիէն յաճախակի կերպով պիտի գար ինքզինքը իմ պաշտպանութեանս տակ դնելու և այդպէսով գրեթէ միշտ իրարու հետ պիտի ըլլայինք: Սովորաբար ես միշտ առջեւէն կ'երթայի, հետադօտիչներուն միայն թոյլատրելով աւելի առաջ անցնիլ: Եւ երբ առաջին անգամ տեսայ իմ թեթեւաշարժ ամաղօնս որ դէպ ի ինծի կուգար պզտիկ քառատրոփներ ընել տալով ձիուն, անպատում երանութիւն մը զգացի: Չիուն չարժուաներ իր խարտեաչ հիւսքերը կը ցնցէին, և ձիավարելու իր անվարժութիւնը թովիչ անձկութիւն մը կը դնէր իր դէմքին վրայ: Լիլիէն երբ քովս հասաւ, համակ վարդագոյն էր. շատ լաւ կը հասկնար որ այդ ամէնը դիտմամբ անանկ մը կարգադրած էի ես որ կարենայինք աւելի յաճախակի կերպով մինակ մնալ իրարու հետ, բայց ամէն ճիգ կը թափէր զայն չի զխնալ ձեւացնելու համար, և չէր կրնար բոլորովին սքօղել չփոթութիւն մը որ զինքը ալ աւելի կ'աղուորցնէր: Սիրտս կը զարնէր պատանիի մը սիրտին պէս և երբ իրարու մօտ եկանք,

բարկութիւնով լեցուեցայ ինքզինքիս դէմ, տեսնալով որ բառ մը իսկ չէի գտնար ըսելու անոր: Բայց միեւնոյն սիրալիլ յուզումը կ'ալեկոծէր մեր երկուքին ալ սիրտերը և այդ պահուն սէրը իսկապէս կ'իշխէր մեր վրայ: Անդիմադրելի ուժէ մը մղուած, ծուկաց լիւրիէնի կողմը, ահոր ձիուն բաշը շտկրտել կեղծեցի և շրթունքս կոխեցի իր ձեռքին վրայ որ թամբին առջեւի գունտին վրայ ինկած կը մնար: Մինչև այն ատեն ճանչցած երջանակութիւններէս շատ աւելի ներուժ, աւելի մեծ ու աւելի խոր երջանակութիւն մը ողողեց ներսս, երկնային սարսուռի մը պէս: Պզտիկ թաթիկը սիրտիս վրայ տարի ու սխմեցի:

—Օհ, Լիլիէն, եթէ Աստուած ինծի տուած ըլլար աշխարհի բոլոր մեծութիւնները ու գանձերը, ես ալ իմ կարգիս յօժարակամ կուտայի զանոնք ձեր շրթունքէն մէկ ժպիտ մը քաղելու համար, որովհետեւ դուք, հոգիով ու մարմինով, յաւէրժապէս գրաւեցիք զիս: Ո՛ր Լիլիէն, Լիլիէն, ա՛լ բնաւ պիտի չի բաժնուիմ ձեռքէ: Անապատներուն ու անփաստաններուն մէջէն պիտի հետեւիմ ձեզի: ձեր ոտքերը պիտի համբուրեմ և պիտի աղօթեմ ձեզի համար: Բայց սիրեցէք զիս քիչ մը. ըսէք ինծի որ ձեր սիրտին մէջ տեղ մը տուած էք ինծի:

Վառ կրակներ կը զգայի կուրծքիս տակ: Լիլիէն, չուարուն, պատասխանեց ցած ձայնով ու այնչափ վախկոտ կերպով որ հաղիւ կը լսէի:

—Ո՛ր Ռա՛լֆ, գիտէ՞ք արդէն ատանկ ըլլալը: Ո՛ր Ռա՛լֆ, գիտէ՞ք արդէն ատանկ ըլլալը:

Այդ վայրկեանին, ես ալ չէի գիտեր ինչ ընելիքս. լա՛լ թէ խնդալ, քառատրոփ արշաւել թէ մնալ հոն, և ինչպէս որ հիմա կը հաւատամ արքայութեան, անանկ ալ այն ատեն հաւատացի որ ա՛լ չիրկուած էի, որովհետեւ աշխարհի վրայ այլևս ոչինչ կը պակսէր ինծի:

Ալ անկէ վերջը, միշտ մէկտեղ էինք, որչափ ատեն որ զբաղումներս ներէին: Մնաց որ, Միսուրի համակնէս ի վեր այդ զբաղումներս հետզհետէ պակսած էին: Երբեք եղած չէ թերեւս որ, որ և է կարաւան մը,

իր գնացքին առաջին ամիսներուն մէջ մեզի չափ բարեբաղդ եղած ըլլայ: Մարդիկ և անասունները քիչ քիչ վարժուած էին կարգի կանոնի և ալ հիմա շատ աւելի ձեռնհասութիւնով կ'ելլային գործին մէջէն. ես ալ առաջուան չափ հսկողութիւն ընելու պէտքը չէի զգար: Իմ վրաս դրուած վստահութիւնը՝ կարաւանին կարգապահութեանը տեսակէտով աւելի մեծ գործ կը տեսնար քան այն հեղինակութիւնը՝ զոր առաջները քանի քանի անգամ փորձով ցուցնել ստիպուեցայ: Պաշարի առատութիւնը և բարեխառնութեան մեղմութիւնը զուարթութիւն ու առողջութիւն կը սփռէին ամէն կողմ: Օրէ օր աւելի կը համոզուէի պատուականութեանը այն յանդուգն գաղափարին՝ որուն հետեւանքով կարաւանը փոխանակ Սէն-Լուիի ու Քանզասի, Իօուաէն և Նէպրասքաէն ուղեցի առաջ վարել: Առաջին ուղեգիծէն անբաժան էին անհանդուրժելի տաքերը, և Միսսիսիբիի ու Միսուրիի մէջ տեղի երկրիններուն ժահրոտ տենդերը, գաղթականներու շարքերուն մէջ հիւանդութիւններ ու մահեր առաջ կը բերէին. հոս, բարեխառն կլիմային շնորհիւ, հիւանդութիւնները ցանցաւ և գործենիս թեթեւ էր:

Միւս կողմէն, իրաւ է որ Սէն-Լուիի ճամբուն առաջին մասը զերծ էր Հնդկիկներու ասպատակութիւններէն. բայց երկու—երեք հարիւր լաւ զինուած ու կռուելու պատրաստ մարդերէ բաղկացած կարաւան մը վախնալու բան չունէր վայրենի ցեղերէ, և մասնաւորապէս Իօուաներէն, որոնք ձերմակներու հետ շատ կռուած ըլլալով, ի վիստ իրենց սորված էին անոնց զէնքերուն կարողութիւնը և չէին համարձակեր բազմաթիւ խմբակներու վրայ յարձակիլ: Երկու բանի մէջ միայն զգուշութիւն ընելու պարտաւոր էինք. մէյ մը գիշեր ատեն անասուններուն մէջ առաջ եկած խուճապը, որուն պատճառը շատ անգամ անկարելի կ'ըլլայ հասկնալ և որ կը ցրուէ կը կորսոնցնէ զանոնք, մէյ մըն ալ վայրի գազաններուն յարձակումը՝ ջորիներուն վրայ: Փոխադրութեան յատկացուած անասուններուն կորուստը, կարաւան մը ամէնէն վտանգալից կացութեան մէջ կրնայ դնել: Բայց այդ

կարգի վտանգներու առաջը առնելու համար, մեր արթուն պահանքները կը հսկէին, որոնց գրեթէ ամէնքն ալ սատիաստաններու կեանքին վարժուած և հոն՝ պատահական դէպքերու ատեն իրենց ինչ ընելիքին գիտակու կիրթ մարդիկներ էին:

Երբ կրցայ կարգապահութիւնը ազէկ մը հաստատել մեր ջոկատին մէջ և մարդիկս ազէկ մը վարժուեցան անոր, դործս անբաղդատելի կերպով պակսեցաւ, մանաւանդ ցորեկ ատեն, և աւելի ազատօրէն ինքզինքս տուի սիրտս լեցնող զգացումներուն: Իրիկուն կ'երթայի պառկելու, միտքէս ըսելով.

—Վաղը, Լիլիէնը պիտի տեսնամ:

Արթնցած ատենս ալ կը կրկնէի.

—Լիլիէնը տեսնամ պիտի այսօր:

Ամէն օր նոր բան մը կը բարդուէր երջանկութեանս ու սիրոյս վրայ: Տարակոյս չիկայ որ դեռատի աղջկան նկատմամբ ցոյց տուած փոյթեանդութիւնս ու մեծարանքներս մարդերուս ուշադրութենէն չէին վրիպած. բայց ոչ ոք զէշ բան մը կը տեսնար ատոր մէջ, մանաւանդ որ մեծ համակրութիւն մը ունէին թէ՛ Լիլիէնի և թէ՛ ինծի համար: Օր մը, ծերուկ Սմիթ քովերնուս անցած ատեն ըսաւ.

—Աստուած օրհնէ ձեզ, մեծաւոր, ձեզի ալ, Լիլիէն:

Մեր երկու անուններուն այսպէս մերձեցումը ամբողջ օրը հրճուանքով լեցուց մեզի: Մօրքուր էթքինս ու Մօրքուր Կրօզլընըր երբեմն բաներ մը կը մրմուռային պաշտեցեալ աղջկանը ականջին և այդ պահուն կը տեսնայի որ ան՝ վարդգոյնով կը համակուէր արշալոյսի պէս, բայց երբեք չի հաճեցաւ ինձ վստահանալ, ինչ որ կը զուրցէին իրեն, երկու պատուական այդ կիները: Հէնրի Սէմիսըն կը լրտեսէր մեզի և հետզհետէ աւելի մշայլաճէմ կը դառնար:—Թերեւս ծրագիր մը կը պատրաստէր իւր հոգիին մէջ, —բայց ես ընաւ կարեւորութիւն տուած չունէի ատոր:

Ամէն առտու, ժամը չորսին, կարաւանին գլուխն էի, հետադօտիները հինգ հարիւր մէթր առջեւէս կ'երթային, իրենց հնդիկ կաթնտուներուն սորվեցուցած ողբերը խմբերգելով և կարաւանը մարդագետնին վրայ ձերմակ երկայն ժապաւէնի մը պէս կ'առա-

ջանար ետեւէն, նոյնչափ մէթր հեռուէն: Եւ երկու ժամ ետքը, ինչ պաշտելի վայրկեան էր ան, երբ յանկարծ ետեւէս քառատրոփ վազող ձիու մը ռանաձայնը կ'աւնէի: Այն կողմ կը նայիմ և ահա հոգիս բաղձանքը կը տեսնամ: Պաշտելիս է որ կը մօտենայ: Առտուան զեփիւռը, մազերը վեր վեր կը հանէ ետեւէն: Այդ մազերը ցրուած, թափթփած են ամէն մէկ շարժումէն, և կամ թերեւս զիտմամբ է որ թոյլ կերպով մը կ'ապուած են ատոնք: Չքնաղ գեղունին ազէկ պիտէ որ ատանկ աւելի աղուոր է, ատանկ աւելի կը սիրեմ զինքը, ինչպէս նաեւ շատ ազէկ պիտէ որ եթէ հովը իմ շրթունքիս վրայ բերէ ոսկիէ այդ կոհակները, պիտի համարեմ զանոնք անվերջ ու անձանձրոյթ: Եւ սակայն իր այդ անմեղ հնարքները չի տեսնալ կը ձեւացնեմ ես, և այդ անգնահատելի հոգիպոլմով է որ կը սկսինք օրերնիս: Բոլորներէն լեզուով կ'ըսեմ իրեն.

—Ձիէն տօպրի: (Բարի լո՛ւս)

Եւ երբ լսեցի իրեն ալ այդ միեւնոյն բառերը արտասանելը, ա՛լ աւելի սիրեցի զինքը. ծննդավայրիս, ընտանիքիս, անցած տարիներուն, բոլոր անցած դացած բաներուն, բոլոր մեղածներուն յիշատակը բարձրացաւ ալքերուս առջև, մարգագետինին վերև, ինչպէս ամարները (mouette) կը ճախրեն Ուլկիանոսին վերև: Մէկէ աւելի անգամներ քիչ մնաց որ լաց մը պիտի պոռթկար ներսէս: Բայց կը վախնայի արցունքներս թափելէ և կը զսպէի զանոնք կոպերուս տակ, թող չի տալով որ հոսին երթան: Լիլիէն ակներև կը տեսնար սիրտիս քաղցր յուզումով մը պատած ըլլալը, և իր դասը կրկնող շաղակրատ թռչունի մը պէս ինք ալ միշտ կ'ըսէր.

—Ձիէն տօպրի: Ձիէն տօպրի: Ձիէն տօպրի:

Ինտո՞ր կուզէք որ ամէն բանէ աւելի չի սիրէի զայն: Ուրիշ պարբերութիւններ ալ սորվեցուցած էի իրեն և երբ կ'արտասանէր զանոնք դժուարութիւնով, ու ես կը խնդայի իր թերի հնչումին համար, պղտիկ աղու մը պէս կը սրբողէր հետս, բարկութիւն ու քէն կեղծելով: Կոխ չէինք ընել երբեք, և սակայն օր մը միայն ամպ մը անցաւ մեր եր-

կուքին միջև : Առտու մը ուղեցի իր խթանին փրթած կաշին կապել և այդ կապած ատենս պագի իր պտուղիկ տոտիկը , կամ աւելի չիտակը , անապատին քարերէն պատուոտած իր խեղճ ու կրակ կօշիկը : Ոտքը ձիուն կողին փակցուց , կրկնելով :

— Զէ' , չըլար , Ռալֆ , չէ' չըլար :

Հեռացաւ քովէս և չուղեց բնաւ մօտենալ , ինչպիսի որ ալ աղաչեցի : Եւ սակայն , կարաւանին ալ չի գնաց միանալու . անուշիկ աղջիկը կը վախնար սիրտիս ցաւ պատճառելէ : Ես ալ իմ կողմէս ամէն ճիգ կը թափէի իրականէն հարկւր անգամ աւելի տըխուր երեւալու և անձայն ձիավարելով մէկտեղ , առած էի երեւոյթը մէկու մը , որուն համար ա'լ ամէն բան վերջացած է աս աշխարհիս վրայ : Գիտէի որ շատ չանցած , կարեկցութիւնով պիտի լեցուէր իր սիրտը , ինչպէս որ ալ եղաւ , ինչու որ իսկոյն , խռովուն , սկսաւ նայուածքս հետազօտել , նման պզտիկ աղու մը՝ որուն մայրիկը բարկացած է : Եւ ստիպուեցայ դուրսն անդին դարձնել , սքօքելու համար թեթեւ ժպիտ մը զոր չէի կրնար զսպել :

Բայց ատիկա անգամ մը միայն պատահեցաւ : Ուրիշ ատեն սովորաբար այնչափ ուրախ զուարթ էինք որչափ մարգագետնին ողնինները և երբեմն , եթէ հարկէ չիտակը ըսել , ես , կարաւանին պետք , աղայէ մը բնաւ տարբերութիւն չունէի , անոր հետ եղած ատենս : Յաճախ , երբ քով քովի կ'երթայինք , մէկէն ի մէկ իրեն կը դառնայի :

— Լիլիէն , շատ , խիստ շատ կարեւոր ըսելիք մը ունիմ ձեզի :

Եւ երբ ան , անեցուն անձկութիւնով մը երեսս կը նայէր , կամացուկ մը կը յարէի :

— Կը սիրեմ ձեզ :

Այն ատեն կը ծռէր , ակաջիւս մօտենալու համար , և իր անբիծ լանջին հառաչը ինծի կը բերէին սա երեք բառերը , որոնցմէ չէի ձանձրանար երբեք և զորս ինք կարմրելով կը զրուցէր :

— Ես ալ անա'նկ , Ռալֆ :

Ասանկով կուտայինք մեր գաղտնիքը մարգագետնին , զոր թեթեւ զեփիւռը կ'առնէր , հեռունները կը տանէր :

Օրերը իրարու կը յաջորդէին , այն աստիճան արագութիւնով որ կարծես արշալոյսը ու գիշերը իրարու կը դպնային , շղթայի մը օղակներուն պէս : Երբեմն , պզտիկ պատահար մը կուգար , մեր վարած կեանքին քաղցր միօրինակութիւնը խանգարելու : Կիրակի օր մը , խառնածին Ուիչիթան խոշոր յամոյր մը բռնեց , ինչպէս նաեւ եզնիկի ձագ մը զոր Լիլիէնի նուիրեցի : Անմիջապէս մանկակ մը շինեց ու անցուց անոր վիզին՝ որուն մէջ տեղէն ջորիի մը վրայէն փրցուած բոժոժ մը կը կախուէր : Անունն ալ Քէթթի դրաւ : Շաբաթ մը չի քշած , պզտիկ կենդանին ընտանեցած էր , և մեր ձեռքերուն մէջէն կեր կուտէր : Ճամբան , Լիլիէնի մէկ կողմէն ես կը քալէի , միւս կողմէն կը քալէր Քէթթին , իր սև խոշոր աչքերը յառելով անոր ու գգուանք մը մուրալով :

Ու ինչպակօք վերեւը , անհուն , հարուստ ու կոյս բացաստանի մը հանդիպեցանք որ սեղանի մը պէս հարթ հաւասար կը տարածուէր : Հետազօտիչները մեծաբերձ խոտերուն մէջը թաղուած , երբեմն անյայտ կ'ըլլային մեր աչքերուն առջեւէն . մեր ձիերը կարծես գետի մը մէջէն կ'անցնէին : Լիլիէնի կը բացատրէի իրեն համար հիմնովին նոր այս տիւզերը և երբ ան հիացած մնաց , հպարտութիւնով լեցուեցայ իբր թէ իմ տիրապետած մէկ վայրս ըլլար ան և ես զայն իրեն ձօնէի : Գարունը վերջացած չէր տակաւին . ապրիլի վերջերն էինք . բոլոր բուսականութիւններուն զօրաւոր ծլարձակումին յարմարագոյն թուականն էր :

Իրիկուան , հազարաւոր խնկամաններու պէս մարգագետնին ամէն կողմերէն սաստիկ անուշահոտութիւններ կը բարձրանային . ցորեկին , երբ հովը փչէր ծաղկափիւռ անհունութեան վրայ , աչքերդ ցաւելու աստիճան կը յօգնէին կարմիր , կապոյտ , ոսկեգոյն ու տնարատ ճերմակ ծաղիկներու փալփուքէն :

(Շարունակելի)

Արսօմասէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃՆԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼՔ Օրագրի

Յ ՈՒՇԱՏԵՏՐ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յաշարհիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ եւ աւելի խնամով պատրաստուած եւ արդէն հրատարակուած է

Պարզ լարակազմ 3 դր. 25 օրինակէն աւելի գնող-
Բնօր լարակազմ 5 » » ցնումն գոնացուցիչ զեղջ
ՈՍԿԵԶՕԾ ՓԱՌԱԿԱԶՍ 8 » »

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավաճառներու եւ քրքրա-
վաճառներու իով : Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Յ ՈՒՇԱՏԵՏՐ

1904

34 X 15 սանթիմէր մեծութեամբ՝
ՍԵՂԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ. Թուրքերէն,
Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն
լեզուներով

Յուշատետրին սկիզբը աւելցուած են
կարգ մը կարեւոր տեղեկութիւններ որք
անհրաժեշտ են ամէն գործի մարդոց :

Բնօր եւ զեղջիկ լարակազմ

Գին 3 դր.

Կը գտնուի Կ. Պոլսոյ եւ գաւառաց բո-
լոր Գրավաճառներու եւ Թղթալաճառ-
ներու իով :

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

ՊԱՅՊԼ-ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20 Զամմաքերար, Կ. Պոլիս

Ամենահոխ մքերք դպրոցական, գրական,
գիտական եւ այլ գրեանց

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ ներկայ դպրոցական
չըջանի աթիւ պատիւ ունի յայտարարել իր
բազմաթիւ յաճախորդաց թէ ունի հարկ եղած
անհրաժեշտ դիւրութիւններ՝ գրեանական ամէն
յանձարարութիւն դոհացուցիչ պայմաննե-
րով կատարելու, ըստ որում իբր գրավա-
ճառական մեծ հաստատութիւն մը արտադ-
րած է վերջին տասը տարիներու մէջ զըպ-
րոցական նորանոր դասագրքերու շարք մը
եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներ-
մուծած է մեր կրթական հին մեթոտներուն
մէջ :

Զերմապէս կը հրուիրուին Պոլսոյ եւ դա-
ւառաց կրթական վարիչ մարմինները՝ փո-
թով յանձնարարել իրենց դասագրքերն, ի
նկատ առնելով գրառանս ընծայած առաւե-
րութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն :

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Փր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ.

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւոյ : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողը ՁԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒՌԻ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան դրամաւորումն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի ՏԵՐԿՆՈՒՄԻՆ

Պոլիս, Սուլթան Համաժ, Բասաժ Բաքրեք Օղլու
Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայեթ Խան, գործակալ Միրան Էֆ. Դաւիթեան :
Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԿԻՄ ՊԱՆՊԱԼԵԱՆ

(ՍԵՂՈՒՆԻ)

ԱՏՍՄՆԱՐՈՅԻ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ Պարսկական Վարժարանին Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61
Զորանեան արաքսման Պալպալեան ամէն օր ակոյալի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5, Գիշերուան ու եւ ժամուն կարելի է դիմել : Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյաները : Տորեկները ակոյալ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կարեալ է :

Ազգասնեւուն ձեռք

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ




Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-իւղոց, թիւ 13 :
Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում : Կանխիկ գնուղին համար հարիւրին 5 զեղչ : Դործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին իսկ ապառիկ դրեւորներէն 100ին 15 զեղչով :

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէնե-
րու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յաճն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առ-
թիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տու-
ներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թոփճըյար Ճատտէսի, Թ. 101:

15-30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի միայ, բայց էական կէտն է՝ լաւ մեքե-
նայ մը սւնկնայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ՝ զէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի ազբիւր մըն է ։
Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԷՆԿ ԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՄ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու սափեւ ձեռքի
միանգամայն մեկնանք
կը գտնուին :

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերության վաճառատանց՝ մեջ՝

ABRU.

1. Մեծ փողոց, Պօն Մանչէի դէմ, թ. 343 և 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի լիւսէին դէմ.

உயி உதய

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

901. 111.

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյյադիտ, Թրամիլէյի կայարանին դէմ, Թ. 13.

ԱՆԻՏԱՐ

Զարչր Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի

ԿԱՏԱՐԵԱՅ ԵՐԱՇԽԱՆՈՐՈՒՅԻՆ:

ՄԱԿՆԱՆԻՒԷՐ գաւառաց բոլոր Էպիսկոպոսն և մեք :

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՆԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՆԱՍԼ ԵՍՆԱԳՍՀ ԸՆԴՆԵՐՈՒԹԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒԳՍ-ԱՌԻՇԵ ՊԱՎԻԿՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. Ընդդեմ հրդեհի (Ի ՔԱՐԹԱՎԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Սոյալիսն ապահովագր. ԸՆԿ. (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ. Պոլիս, Բոքսի Լիօնե ԸՆԿ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐՍԵՅԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօրուլօ Խան, Թ. 52-53-54-55-56

ՆՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան զեղեցիկ տպագրութեամբ
հրատարակուած

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԳԱՂԻՆԵՆ-ՀԱՅՆԵՆ

Գ. ՆԱՐ-ՊԵՅԻ

Դին երկու հատորին միասին դահկ. 120

Վաճառման կեդրոնացեղին է

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Ղալաթիա Սեղթոս Խան Թիւ 5

10-10

ՌՈՊԷՐԴ ԲՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
պիտի սկսի Սեպտ. 2/15: Կարգադրութիւն-
ներ եղած են նոր դիւրութիւններ տալու
վաճառականական ուսմանց համար: Մնայուն
բժիշկ մը աշակերտներու առողջութեան,
մարմնամարզներուն ու խաղերուն, ինչպէս
նաեւ վարժարանին ընդհանուր առողջապա-
հական վիճակին վրայ կը հակէ: Նախորդ
տարու ընէ սկսեալ՝ բացուած է նաեւ փոքր
սոլոց յատկացեալ նոր շէնքը, ուր կ'ընդուն-
ուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ:

10-12

Կ. Յ. ՅԵՐՍԵՅԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՐ

Կը ստանանէ վաճառականական պիտոյից,
սպագրական գործերու պատրաստութեան
հոգը.

ԴԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մախուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% զեղչ.

Ծանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն

ճառամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԻՐԱՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՐ

ԼԵԻՈՆ Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վկայեալ Բարիգու բժշկական վարժարանէն
Նախկին chef de clinique Ֆրանսայի
Առամնաբուժական Վարժարանին: Կ'ընդունի
ամէն օր իր բնակարանը՝ Բերա, Մեծ-փողոց
Թ. 407 (Նանիի գարեջրատան դէմ):

10-10